


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում, ըստ 1208 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), փաստացի գներով, թողարկվել է 47500.4 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 47863.8 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 6725.4 մլն դրամի, այլ երկրներում՝ 7445.2 մլն դրամի արտադրանք:

2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 111.4%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էներգետիկայի՝ 118.1%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 1999թ. դեկտեմբերի նկատմամբ




Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	(տոկոսներով)
			Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2000 թ.			
հունվար	80.7	94.3	80.7
փետրվար	111.1	108.0	89.7
մարտ	105.5	99.4	94.6
ապրիլ	89.0	95.4	84.2
մայիս	111.3	119.8	93.7
հունիս	103.9	102.0	97.4
հուլիս	104.8	104.3	102.1
օգոստոս	103.5	105.9	105.7
սեպտեմբեր	96.7	107.0	102.2
հոկտեմբեր	99.3	107.1	101.5
նոյեմբեր	96.5	108.5	97.9
դեկտեմբեր	124.5	123.1	121.9
2001 թ.			
հունվար	78.5	116.5	78.5
փետրվար	95.0	106.0	74.6

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ըստ գործունեության հիմնական տեսակների¹

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով ² , մլն.դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով ² , մլն. դրամ	2001թ. հունվար-փետրվարի, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը տոկոսով 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ (համադրելի գներով)
Ամբողջ արդյունաբերությունը	47500.4	47863.8	111.4
<i>այդ թվում՝</i>			
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	18350.5	18350.5	101.6
Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	2930.1	2248.4	143.4
Վերամշակող արդյունաբերություն	26219.8	27264.9	116.0
<i>որից՝</i>			
սննդամթերքների և ըմպելիքների արտադրություն	15263.0	15769.5	111.4
ծխախոտի ապրանքների արտադրություն	847.2	1154.2	29.6
տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն	142.1	131.6	87.9
հագուստի արտադրություն	376.6	288.8	2.1 անգամ
կաշվի դաբադում և մշակում, կոշիկի, ճամպուրոկների, պայուսակների, թամբա-լծասարքային իրերի արտադրություն	17.3	8.8	81.7
փայտանյութի և փայտե իրերի արտադրություն	114.0	85.0	3.7 անգամ
քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրություն	1522.0	1627.0	4.4 անգամ
ռետինե և պլաստմասսայե իրերի արտադրություն	41.8	43.3	61.9
ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն	423.1	399.4	166.4
մետալուրգիական արդյունաբերություն	3201.8	3012.6	2.2 անգամ
մետաղամշակման արդյունաբերություն	177.5	173.9	78.0
մեքենաների և սարքավորումների արտադրություն	275.6	471.0	80.3
թանկարժեք իրերի արտադրություն	2946.3	3103.0	129.7


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ արտադրության սեկտորների, 2001թ. հունվար-փետրվարին



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը ըստ գործունեության հիմնական տեսակների առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:


Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում



Էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխանցումը և բաշխումը
 Էլեկտրաէներգիայի արտադրությունը
 1. հիդրոէլեկտրակայաններում
 2. ջերմաէլեկտրակայաններում
 3. ատոմային էլեկտրակայանում

 Էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխանցումը և բաշխումը


Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում



մետաղային հանքաքարի արդյունահանում

 Լեռնահանքային արդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ բնագավառներ

Վերանշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքների և ըմպելիքների արտադրություն
- 2-ծխախոտի ապրանքների արտադրություն
- 3-տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն
- 4-հագուստի արտադրություն
- 5-քիմիական նյութերի և քիմիական արտադրանքի արտադրություն
- 6-ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն
- 7-մետալուրգիական արդյունաբերություն
- 8-մետաղամշակման արդյունաբերություն
- 9-մեքենաների և սարքավորումների արտադրություն
- 10-թանկարժեք իրերի արտադրություն
- 11-գործունեության այլ տեսակներ

2001թ. հունվար-փետրվարի արտադրված (ուաշվառվող) 57-ի հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 57-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2000թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 41-ից 34-ի և սպառողական ապրանքների՝ 46-ից 23-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները ³

(համադրելի բացթողնման գներով, մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-փետրվարին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, տոկոսով
	2001թ.	2000թ.	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	18566.8	17455.3	106.4
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	11795.6	10822.2	109.0
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	3357.4	2149.3	156.2
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	3413.8	4483.8	76.1
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության	1227.0	644.9	190.3
մշակութային և տնտեսական նշանակության	2186.8	3838.9	57.0

³ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

Ընդհանուր առմամբ, 2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում թողարկվել է 1168.6 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2000թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 102.5%-ը: Ընդ որում, ՋԷԿ-երում և ՋԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է համապատասխանաբար 5.0 և 15.2%-ով, իսկ ՀԱԷԿ-ում նվազել է 2.7%-ով:

2001թ. հունվար-փետրվարին ՀԱԷԿ-ը թողարկել է 532.9մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 45.6%-ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար 479.8 մլն կվտ ժամ և 41.1%-ը, ՋԷԿ-երը՝ 155.9 մլն կվտ ժամ և 13.3%-ը:

2001թ. հունվար-փետրվարին հանրապետությունում թողարկվել է 222.2 հազ.Ջկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2000թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 111.7%-ը:

2001թ. հունվար-փետրվարին սննդի արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը⁴

	2001 թ. հունվար-փետրվար	2000 թ. հունվար-փետրվար	2001թ. հունվար-փետրվարը տոկոսով 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ
Չկան որս, տոննա	62.8	74.5	84.3
Միս ⁵ , տոննա	4376	4357 ⁰	100.4
Երշիկեղեն, տոննա	140.1	136.2	102.9
Պանիր ⁵ , տոննա	502	522 ⁰	96.2
Պաղպաղակ, տոննա	2.1	5.5	38.2
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , տոննա	11986	12396 ⁰	96.7
Պահածո, հազ. պայմ. բանկա	350.4	665.0	52.7
Վյուր, տոննա	16457	20106	81.9
Չավարեղեն, տոննա	1.8	19.7	9.1
Հաց և հացամթերք, տոննա	49424	50176 ⁰	98.5
Հրուշակեղեն, տոննա	529.1	96.9	5.5 անգամ
Սակարոնեղեն, տոննա	98.7	56.9	173.5
Օղի, հազ. լիտր	1287	1296	99.3
Կոնյակ, հազ. լիտր	674.3	314.6	2.1 անգամ
Խաղողի գինի, հազ. լիտր	204.9	538.5	38.1
Շամպայն գինի, հազ. շիշ	85.9	70.3	122.2
Գարեջուր, հազ. լիտր	592.8	573.3	103.4
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ հազ. լիտր	2990	1228	2.4 անգամ
Համբային ջրեր, հազ. 0,5 լ շիշ	4684	3103	150.9
Աղ, տոննա	3374	3915	86.2
Միզարետներ, մլն.հատ	159.4	622.2	25.6

2001թ. հունվար-փետրվարին բեթև արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2001 թ. հունվար-փետրվար	2000 թ. հունվար-փետրվար	2001 թ. հունվար-փետրվարը տոկոսով 2000 թ. հունվար-փետրվարի նկատմամբ
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	0.2	6.9	2.9
Բրդյա գործվածքներ, հազ. մ ²	5.0	-	-
Գորգեր և գորգեղեն, հազ. մ ²	2.1	2.7	77.8
Գուլպեղեն, հազ. զույգ	92.6	161.6	57.3
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	414.0	360.9	114.7
Կարի արտադրանք, մլն. դրամ	916.3	487.6	187.9

⁴ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

2001թ. հունվար-փետրվարին *քիմիական* արդյունաբերության ճյուղի հիմնական արտադրատեսակներից սինթետիկ կաուչուկի արտադրությունը 2000թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 304.7 անգամ, կաուստիկ սոդայինը՝ 31.4 %-ով, պլաստմասսե իրերինը՝ 29.9, քիմիկա-դեղագործական արտադրանքինը՝ 14.7 %-ով:

2001թ. հունվար-փետրվարին շինանյութերի արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2001 թ. հունվար-փետրվար	2000 թ. հունվար-փետրվար	2001 թ. հունվար-փետրվարը տոկոսով 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	804	591	136.1
Ապրանքային բետոն, մ ³	1730	179	9.7 անգամ
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	6663	2569	2.6 անգամ
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	1120	2627	42.6
Կիր, տոննա	710	31	22.9 անգամ
Գաջ, տոննա	-	100	-
Ցեմենտ, հազ. տոննա	10.3	1.6	6.4 անգամ
Կանոնավոր կտրվածքի տուֆ, մ ³	1822	345	5.3 անգամ
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	560	3980	14.1
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	807.5	987.4	81.8

Մետալուրգիական արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե փայլաթիթեղի արտադրությունը ավելացել է 558.7 անգամ, ալյումինե գլանվածքինը՝ 33 անգամ, կոմպերտորային (սև) պղնձինը՝ 12 անգամ և պղինձը պղնձե խտանյութում՝ 74.6%-ով:

2001թ. հունվար-փետրվարին մեքենաշինության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2001 թ. հունվար-փետրվար	2000 թ. հունվար-փետրվար	2001 թ. հունվար-փետրվարը տոկոսով 2000 թ. հունվար-փետրվարի նկատմամբ
Մետաղահատ հաստոցներ, հատ	14	10	140.0
Ռելեներ, հազ. հատ	59.3	16.3	3.6 անգամ
Ուժային ճկուն կաբելներ, կմ	4.2	2.7	155.6
Ուժային կաբելներ մինչև 1կՎ լարման համար, կմ	150	-	-
Տեղակայման հաղորդալարեր, կմ	1446	68	21.3 անգամ
Կենտրոնախույս պոմպեր, հատ	1338	725	184.6
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	89	22	4 անգամ
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	42	-	-
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	511	-	-